ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԻՆ՝ ԲՐՅՈՒՍԵԼԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵԶԻ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԻՆ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Փարիզ

Ուրախ սրտով կողջունենք հիմնարկեքը Բրյուսել մայրաքաղաքի հայոց եկեղեցվույն և Սուրբ Էջմիածնեն կղրկենք Մեր օրհնությունը բելգիահայ Մեր հավատացյալ հոգևոր զավակներուն, ջերմապես գնահատելով անոնց բարի եռանդը, իրենց աղոթքի Տունը կառուցելու և դեպի երկինք բարձրացնելու հայոց հավատքի սուրբ խաչը հաղթական:

Բարձրորեն կգնահատենք և կօրհնենք շինության հանձնաժողովի անձնապես անդամները և առաքինասիրտ բարերարները, որոնց բարոյական ու նյութական զոհաբերումներով շուտով մարմին և հոգի պիտի առնե տարիներու երազանքը բելգիահայ բարեպաշտ ժողովուրդին: Մեր սրտագին գնահատանքը նաև Ձեզի, սիրելի Գյուտ սրբազան, որ մշտապես հոգատար և քաջալիր հանդիսացաք այս սուրբ ձեռնարկին կյանքի կոչման համար:

Բրյուսելի հայկական նորաշեն եկեղեցին հոգևոր հաղթանակն է բելգիահայ ժողովուրդին, այլև համայն հայոց ազգին, որի համար հպարտ ենք մենք և հոգեպես մխիթարված: Տերը թող օգնական և զորավիգ մնա ձեզի բոլորիդ, որպեսզի կարճ ժամանակ անց Բրյուսելի հայոց աղոթքի Տունին կամարներեն առ Աստված բարձրանան աղոթքները մեր հոգեպարար սուրբ պատարագին:

Սիրելիներ Մեր, «Այսուհետև հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի և ամենայն ինչ ձեր սիրով եղիցի». ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
6 նոյեմբերի 1986 թ.